



## ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՂԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Հանձարեղ Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ հոգևոր ճեմարանի տեսչությունը և դասախոսական կազմը գովելի գաղափարն էին ունեցել ճեմարանի կամարների ներքո մի անգամ ևս ոգեկոչել անմահ վարդապետի խնկելի հիշատակը:

**Դեկտեմբերի 17-ին, չորեքշաբթի,** երեկոյան ժամը 18-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությանը սրահում, Վեհախոտ Հայրապետի բարձր նախագահության ներքո, տեղի ունեցավ հիշատակի երեկույթ՝ նվիրված հայ երգարվեստի խոշորագույն մշակի՝ Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակին:

Հանդեսին ներկա էին՝ Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոններությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և բազմաթիվ հրավիրյալներ:

Հանդեսը բացում է հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Շնորհք վրդ. Գասպարյանը, որը և ընդգծում է, թե բոլորս հավաքվել ենք ճեմարանի հարկի տակ մի անգամ ևս սիրո և հարգանքի մեր սրտագին տուրքը մատուցելու մեծ հոգևորականին և արվեստագետին, որն աստվածային ներշնչումով, իր հանձարով և հայ մշակույթին ծառայելու անգնահատելի գործով հարստացրեց մեր ժողովրդի հոգևոր գանձերը և նրանք ներկայացրեց նաև աշխարհի քաղաքակիրթ մարդկությանը:

Այնուհետև սկսվում է հանդեսի գեղարվեստական մասը, որն ամբողջովին կազմված էր Կոմիտասի երգերից և մեծ վարդապետին նվիրված բանաստեղծություններից: Հոգևոր ճեմարանի երգչախումբը, երաժշտության դասախոս Խորեն Մեխյանեջյանի ղեկավարությամբ, կատարում է՝ «Գարնան գութան», «Երևան բաղ եմ արել», «Խումար պտուկե», «Հարսանեկան երգեր», «Իմ չինարի շարը» խմբերգերը:

Կոմիտաս վարդապետին նվիրված սրտառուչ, գողտրիկ բանաստեղծությունների արտասանությամբ հանդես են գալիս՝ Հովհաննես սրկ. Գըվրգյանը՝ «Կոմիտաս» (Ն. Ջարյան), Բ լսարանի ուսանող Խաչիկ Խաչա-

տըրյանը՝ հատվածներ «Անլուելի զանգակատուն» պոեմից (Պ. Սևակ), Գ դասարանի ուսանող Վրեժ Նաջարյանը՝ «Կոմիտասի համար», հատվածներ (Շ. Չարենց):

Ջութակահար Պերն Կարապետյանը հուզականությամբ նվագում է Կոմիտասի «Կոունկը», նրա եղբայրը՝ ջութակահար Արմեն Կարապետյանը՝ «Ծիրանի ծառը», իսկ թավջութակահար Ջոհրայ Սվազյանը՝ «Քելեր, ցոլերը»: Ընդհանուր երաժիշտները միասին հնչեցնում են կոմիտասյան «Խորհուրդ խորին»-ը՝ գերելով հանդիսատեսին: Մենանվագների ժամանակ դաշնամուրի վրա նվագակցում են Անժելա Հաչիկյանը և Արմենոսի Սվազյանը:

Օրվա հանդեսի գլխավոր բանախոսն է հոգևոր ճեմարանում հայ ժողովրդի պատմության ավագ դասախոս Գրիգոր Գյուլյանը, որն իր բովանդակային, ոգևորիչ և հուշաշունչ դասախոսությամբ հանգամանորեն ներկայացնում է էջմիածնական խորհուրդը, որի մեջ վերստին ծնվեց Կոմիտասը, սպա՝ Գևորգյան ճեմարանը, ուր կազմավորվեց սպազա մեծ վարդապետը, որի կատարած գործը բանախոսը գնահատեց որպես համահավասար ստեղծագործություն Մարտյանի հրաշքի:

Իր համառոտ գծերի մեջ ներկայացնում ենք այդ շահեկան և ինքնատիպ դասախոսության հիմնական մտքերը:

«Անցյալ դարի 70-ական թվականներին հիմնված Գևորգյան ճեմարանը հայկական վերածննդի խոշորագույն օջախներից մեկն էր: Վանքին կից, Հայաստանի սրտի վրա բարձրացող այդ հոգևոր և կրթական հաստատությունը մագնիսի նման իրեն էր քաշում մեր մտավորականության և երիտասարդության ծաղիկը: Այդտեղ էին գալիս Հայաստանի բոլոր կողմերից. գալիս էին Վանից, Մուշից, Սասունից, գալիս էին Գարաբաղից, նույնիսկ հեռավոր Անատոլիայից: Հայաստանի տարբեր հատվածներից եկած երիտասարդների մերձեցումից և շրփումից այդ հոգևոր հաստատության մեջ ստեղծվում էր այն համահայկական, գերհատվածական մթնոլորտը, որի խոսացյալ,

չգերազանցված արգասիքը պիտի հանդիսանար Կոմիտասու վարդապետը:

...Մինչև այսօր էլ շատ-շատերի պատկերացման մեջ՝ Էջմիածինը միայն վանք է ու տաճար: Բայց ո՛չ: Էջմիածինը միայն վանք ու տաճար չէ, այլեի՛ն է: Էջմիածինը այլևի քան 16-դարյա հրեղեն պատմություն է, որ մեր ժողովուրդը գրել է իր առատորեն հեղված արյունով, իր սրբերի նահատակությամբ, իր ոգորումներով ու խիզախումներով, իր ստեղծագործ մտքի պտղաբերումներով, իր հրաշք գոյության, իր հույսի ու հավատքի անմարելի կրակով: Հայ դարերը իրենց կենսահյույթով են շաղախել և ամբողջացրել Էջմիածնի խորհուրդը՝ այն դարձնելով հայ հավաքական զգացողության կենդանի արձագանքարանը: Էջմիածինը բնակեցված է խոսող լուսություններով է, որ Քյոթաֆայի որբ Սողոմոնը դարձավ Կոմիտաս: Էջմիածնական խորհուրդն էր, որ Սողոմոնին դարձրեց Կոմիտաս:

...Արվեստը մի մեծ ինքնամոռացություն է՝ հանուն այլևի մեծ ինքնահաստատման: Արվեստը մի հրաշալի կերպարանափոխություն է, ամբողջական ազատություն: Բայց դժվարին տրեմությամբ են նվաճվում արվեստի բարձունքները:

...Առանց արհույթան, ինքնամոռաց նվիրումի և դժվարին տրեմության փաստը հաստատելու անկարելի է բացատրել կոմիտասյան հրաշքը: Կոմիտասի համար չի եղել մի այլ երկինք, քան իր ժողովրդի անարատ հոգին: Կոմիտաս ուրացել, մոռացել է իր անձը, հրաժարվել աշխարհից՝ ամբողջությամբ ձուլվելու համար այդ անարատ հոգու անսահմանության մեջ, և դժվարին տրեմությամբ, սիրո արարչական ուժով անդրադարձել է այդ անարատ հոգու անսահմանությունը իր ստեղծագործության մեջ:

Կոմիտասը ամբողջությամբ է արտահայտել հայ ժողովրդի հոգեբանությունը և դարերի համար է անդրադարձրել նրա անարատ հոգու անսահմանությունը: Իր ժողովրդի ճակատագրից թև առած՝ լսած, բազմացած, ահագնացած Կոմիտասը հանճարալին հայտնատեսությամբ սուզվում է հայ ալեկոծ ծովի հատակը: Փնտրում է, որոնում, գտնում, վեր հանում մեր ոգու գանձերը և իր մոգական մատներով փայլեցնում արևի տակ: Կոմիտասը գտնում, մե՛զ է վերադարձնում մեր հոգին, մեր ոճը: Հայը երկրորդ անգամ ճանաչում է իրեն և վերստանում իր ազգային միասնությունը՝ առհայական ոգու ընդհանրության վրա: Ահա Կոմիտասի կատա-

րած գործի համազգային անգնահատելի նշանակությունը:

...Ի՞նչ է կոմիտասյան երգը:

Կոմիտասյան երգը այլևի քան չորսհարամյա մեր ազգային անկրկնելի գոյության բյուրեղացած հոյակերտումն է. կոմիտասյան երգի մեջ անդալանա հավատարմությամբ անդրադարձվեց այն երկինքը, ուր մեր հայրերը նվաճեցին իրենց արդար ու սուրբ վաստակով, մեր նահատակները՝ իրենց արյունով, մեր սրբերը՝ իրենց հոգեբուխ, երկնադրոդ աղոթքներով:

...Կոմիտասը ամբողջական հանճար է, որի աչքից չի վրիպել մեր կյանքի և ոչ մի բնագավառ: Նրա ստեղծագործությունը այքի է ընկնում իր բազմազանությամբ: Կոմիտասն ունի սիրո երգեր, բնության երգեր, աշխատանքի երգեր, ժողովրդական վշտի երգեր, հարսանեկան երգեր, կատակերգեր, ծիսական երգեր ու պարերգեր:

...Եվ այսօր, վաղը, մի՛շտ երախտապարտ հայ ժողովուրդը, դարերի այս անխոնջ ուղեկիցը, իր անմահության շքերթում, ի նշանավորումն իր ազգային հանճարի, որպես ընձա հավիտենության գափակյալին կներկայացնի քաղցր ու նվիրական, սուսնց տիտղոսի, պարզ և անպաճույճ, բայց անհուն մի սուրբ անուն՝ Կոմիտաս:

Փա՛րք Կոմիտասին ճնող մեր ժողովրդին. Փա՛րք մեր հանճարին՝ Կոմիտասին:

Հանդիսության փակումը կատարում է Վեհափառ Հայրապետը, շեշտելով, որ Մայր Աթոռում և հոգևոր ճեմարանի հարկի ներքո կազմակերպված սույն հանդիսությունը կգրավակումն է Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված տոնակատարությունների, մասնավանդ այս հարկի տակ, որ կազմավորվել է ս. Էջմիածնի աստվածատուր օրհնության ներքո, ճշմարտապես հոգեշնորհ վարդապետը, հարազատ զավակը Մայր Աթոռի և հայ ժողովրդի, մեծ երախտալորը մեր եկեղեցական ու ժողովրդական երգարվեստի:

Իր խոսքի վերջում Հայոց Հայրապետը կոչ է անում ճեմարանի ուսանողությանը՝ հավատարիմ մնալ կոմիտասյան սրբազան ուխտին և առաքելությանը:

Կոմիտասի 100-ամյակին նվիրված սույն հանդիսությունը ավարտվում է խմբովին երգված «Հայր մեր»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Մեծ Կոմիտասը ապրում է ամեն հայի հոգում, մայր հայրենիքում և թե սփյուռքի տարածքի վրա. նա ապրում է նաև այս դարավոր սուրբ հաստատության մեջ, որ ամենայն հայոց Մայր Աթոռ սուրբ Էջմիածինն է: